

Կազմված է 9 մարտի 2016թ-ին  
Բաղկացած է 22 էջից

ՏՊԱԳՐՎԱԾ Է ԸՆԴԱՄԵՆԸ 4 ՕՐԻՆԱԿ

ՕՐԻՆԱԿ 1

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է


«Կանաչ տեխնոլոգիաների հայկական կենտրոն»

հիմնադրամի»

Հիմնադիրների 9-ը մարտի 2016թ.

ԹԻՎ 2 որոշմամբ

ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՏՆՕՐԵՆԻ Ժ/Պ

Վերոգ Պետրոսյան 


ԳՐԱՆՑՎԱԾ Է  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ  
ՌԵԳԻՍՏՐԻ ԿՈՂՄԻՑ 11.03.2016թ.

Գրանցման թիվ 222.160.891452

Վկայական ՈՅՊ 1041452

ՀՎՀՀ 05543384

Պետական ռեգիստրի գործակալության

պետ Կ. ԱՐԱՍՅԱՆ 



# «ԿԱՆԱՉ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ»

ՀԻՄՆԱԴՐԱՄԻ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ 2016թ.

## 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. «Կանաչ տեխնոլոգիաների հայկական կենտրոն» հիմնադրամը (այսուհետ՝ Հիմնադրամ) հիմնադիրների կամավոր գույքային վճարների հիման վրա ստեղծված և անդամություն չունեցող նորարարական, տեխնոլոգիական, բնապահպանական և այլ հանրագուտ նպատակներ հետապնդող ոչ առևտրային կազմակերպություն է, որը հիմնադրվել է հիմնադիրների 2016թ. մարտի 9-ի որոշմամբ և գործում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգրք), «Հիմնադրամների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ Օրենք), Հայաստանի Հանրապետության Միջազգային պայմանագրերի, սույն կանոնադրության և այլ իրավական ակտերի համաձայն:

### 1.2. Հիմնադրամի անվանումն է՝

հայերեն լրիվ՝ «Կանաչ տեխնոլոգիաների հայկական կենտրոն» հիմնադրամ

հայերեն կրճատ՝ «ԿՏՀԿ» հիմնադրամ

ռուսերեն լրիվ՝ ФОНД "Армянский центр зеленых технологии"

ռուսերեն կրճատ՝ ФОНД "АЦЗТ"

անգլերեն լրիվ՝ "Armenian Green Technologies Center" FOUNDATION

անգլերեն կրճատ՝ "AGTC" FOUNDATION

Հիմնադրամը կարող է օգտագործել իր լրիվ և կրճատ անվանման օտարալեզու թարգմանություններով ցանկացած տարբերակ:

### 1.3. Հիմնադրամի գտնվելու վայրն է՝

Հայաստանի Հանրապետություն, 3115, Շիրակի մարզ, քաղաք Գյումրի, Կ.Դեմիրճյան 3-րդ նրբանցք, 14 տուն:

### 1.4. Հիմնադրամի հիմնադիրներն են (այսուհետ՝ Հիմնադիր)՝

1. Հայաստանի Հանրապետության քաղաքացի ԳԵՎՈՐԳ ՌՈՒԲԵՐՏԻ ՊԵՏՐՈՍՅԱՆ (անձնագրային տվյալներ՝ AK0477913, տրված 02.04.2010թ. 016-ից, հաշվառված՝ ք. Գյումրի, Երևանյան խճուղի 131 շենք 8 բնակարան),
2. Հայաստանի Հանրապետության քաղաքացի ԱՐՄԵՆ ՏԱԼՎՈՐԻԿԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ (անձնագրային տվյալներ՝ AM0410763, տրված 06.08.2011թ., 004-ի կողմից, հաշվառված՝ ք. Երևան, Բաղրամյան 79 ա շենք, 10 բնակարան),

3. Հայաստանի Հանրապետության քաղաքացի ԽԱՉԻԿ ՌԱՖԻԿԻ ՍԱՀԱԿՅԱՆ (անձնագրային տվյալներ՝ AK0320993, տրված 22.06.2009թ., 016-ի կողմից, հաշվառված՝ ք. Գյումրի, Էլեկտրոպրիբորնի 4-րդ շարք, տուն 3):

#### 1.5. Հիմնադրամի շահառուներն են.

1. Հայաստանի Հանրապետությունը.
2. Գյուղական և քաղաքային համայնքները.
3. Հասարակական և ոչ առևտրային կազմակերպությունները.
4. Կոմունալ ծառայություններ (էլեկտրամատակարարում, գազամատակարարում, ջրամատակարարում, ջերմամատակարարում և այլն) մատուցող ընկերությունները.
5. Բազմաբնակարան շենքերի սեփականատերերը.
6. Սոցիալապես անապահով ֆիզիկական անձինք,
7. Ձեռնարկատիրությամբ զբաղվող անհատներն ու իրավաբանական անձինք, այդ թվում նաև փոքր և միջին ձեռնարկատիրությամբ զբաղվող անհատներն ու իրավաբանական անձինք,
8. Ֆերմերներ, գյուղմթերքների արտադրությամբ և վերամշակմամբ զբաղվող ֆիզիկական և իրավաբանական անձինք,
9. Ուսումնական և գիտահետազոտական կազմակերպություններ,
10. Պատանիները, երիտասարդները, կանայք և հատուկ կարիքներով մարդիկ,
11. Ազգային փոքրամասնություններ:

1.6. Հիմնադիրը պատասխանատվություն չի կրում իր ստեղծած Հիմնադրամի պարտավորությունների համար: Հիմնադրամը պատասխանատվություն չի կրում իր հիմնադրի պարտավորությունների համար:

1.7. Հիմնադրամի պաշտոնական լեզուն հայերենն է:

1.8. Հիմնադրամը պարտավոր է յուրաքանչյուր տարի հաշվետու տարվան հաջորդող մարտի 25-ից ոչ ուշ, <http://www.azdarar.am> հասցեում գտնվող Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում հաշվետվություն հրապարակել իր գործունեության մասին:

1.9. Հիմնադրամն իրավաբանական անձ է և ստեղծված է համարվում օրենքով սահմանված կարգով պետական գրանցման պահից:

Հիմնադրամն ունի իր անվամբ կլոր կնիք (հայերեն, ռուսերեն և անգլերեն գրառումներով) և կնիքի կենտրոնում խորհրդանիշի պատկերով, ունի խորհրդանիշ (նկարագրությունը բերված է կանոնադրության վերջում կից թիվ 1 հավելվածում), կարող է ունենալ դրոշմներ, պաշտոնաթղթեր և ձևաթղթեր, խորհրդանիշ, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով գրանցված ապրանքային, առևտրային և այլ նշաններ ու անհատականացնող այլ ռեկվիզիտներ: Հիմնադրամն իրավունք ունի օրենքով

սահմանված կարգով բացել բանկային հաշիվներ Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների բանկերում՝ Հայաստանի Հանրապետության դրամով և (կամ) արտարժույթով:

Հիմնադրամի ձևաթուղթը նշում է պարունակում Հիմնադրամի անվանման, խորհրդանշի, գտնվելու վայրի, կապի միջոցների համարների և հասցեների մասին: Հիմնադրամի կնիքը և ձևաթուղթը Հիմնադրամի մարմինների և պաշտոնատար անձանց կողմից իրենց իրավասության սահմաններում օգտագործվում են Հիմնադրամից ելնող՝ երրորդ անձանց ուղղված փաստաթղթերի ձևակերպման և վավերացման համար: Հիմնադրամի կնիքի և ձևաթղթի օգտագործումը չի կարող անվերապահորեն անհրաժեշտ համարվել՝ Հիմնադրամից ելնող՝ երրորդ անձանց ուղղված փաստաթղթերի ուղղված իսկության և վավերականության հաստատման համար, բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերի: Բոլոր դեպքերում, Հիմնադրամից ելնող՝ երրորդ անձանց ուղղված փաստաթղթերի իսկության և վավերականության անհրաժեշտ հավաստումն է Հիմնադրամի իրավասու պաշտոնատար անձանց և/կամ ներկայացուցիչների ստորագրությունը:

1.10. Հիմնադրամն ինքնուրույն է որոշում իր գործունեության ռազմավարական ծրագրերը:

1.11. Հիմնադրամը, որպես սեփականություն, ունի հիմնադրի գույքից առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով, կարող է իր անունից կնքել պայմանագրեր, ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

1.12. Հիմնադրամն իր կանոնադրությանը համապատասխան, սեփականատիրոջ իրավունքով, իրականացնում է իր ունեցվածքի տնօրինումը, օգտագործումը և տիրապետումը:

1.13. Հիմնադրամը գործում է Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում և օտարերկրյա պետություններում՝ այդ պետությունների օրենսդրությանը համապատասխան: Հիմնադրամը Հայաստանի Հանրապետությունում և նրանից դուրս կարող է ստեղծել մասնաճյուղեր և ներկայացուցչություններ, ինչպես նաև հիմնարկներ, որոնք գործում են Հիմնադրամի անունից՝ Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի կողմից հաստատված կանոնադրություններին համապատասխան:

1.14 Հիմնադրամի գործունեության ժամկետը՝ անժամկետ է:

1.15 Հիմնադրամն ունի օրենքով չարգելված բոլոր եղանակներով իր իրավունքները պաշտպանելու իրավունք:

## 2. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

### 2.1. Հիմնադրամի նպատակներն են՝

- Նպաստել կանաչ տեխնոլոգիաների ոլորտի զարգացմանն ուղղված պետական քաղաքականության բարելավմանն ու իրականացմանը,
- Խթանել կանաչ տեխնոլոգիաների կիրառման մշակույթի ձևավորմանն ու տարածմանը,
- Աջակցել բնական էկոհամակարգերի պահպանությանը, կլիմայի փոփոխության մեղմման և հարմարվողականության մեխանիզմների ներդրմանն ու զարգացմանը,
- Իրականացնել կանաչ տեխնոլոգիաների արդյունավետության ու հեռանկարայնության մասին հասարակության իրազեկում, հանրությանը դարձնելով կանաչ տեխնոլոգիաների ներդրմանը մասնակից և դրանք ուղղորդելով դեպի հանրային և բիզնես օգտագործում,
- Կրթական ծրագրերի միջոցով ընդլայնել ոլորտի մասնագետների ու կազմակերպությունների ցանցը, նպաստելով ոլորտում մրցակցային դաշտի ձևավորմանը,
- Սեփական օրինակով ցույց տալ հանրային և բիզնես ոլորտներում կանաչ տեխնոլոգիաների կիրառման արդյունավետությունը:
- Խթանել նորարարական, առաջավոր տեխնոլոգիաների ներդրման գործընթացը:
- Կանաչ տեխնոլոգիաների ոլորտը դարձնել Հայաստանում զարգացած ու լայնորեն կիրառվող ոլորտ:

### Հիմնադրամի խնդիրներն են՝

- համատարած դարձնել կանաչ տեխնոլոգիաների մասին հանրության իրազեկվածությունը և հասարակության լայն շերտերին ներգրավել այդ տեխնոլոգիաների արտադրման, ներդրման ու օգտագործման մեջ,
- մեծապես ընդլայնել ոլորտի մասնագետների բազմությունը, իրազեկել կանաչ տեխնոլոգիաների ոլորտում նորարարությունների ու նոր տեխնոլոգիաների մասին,
- ընդլայնել ոլորտում գործող տնտեսվարողների քանակը և նպաստել ոլորտում մրցակցային դաշտի կայացմանը,
- նպաստել կանաչ տեխնոլոգիաների ոլորտում նոր տեխնոլոգիաների մշակմանն ու ներդրմանը,
- մշակել ոլորտը կարգավորող որոշումների, օրենքների նախագծեր և ներկայացնել համապատասխան մարմիններին,
- իրականացնել լոբբինգ և շահերի պաշտպանություն,
- նպաստել քաղաքաշինության, քաղաքային տնտեսության, արդյունաբերության և տնտեսության այլ բնագավառներում նորարարական, այդ թվում է ներգախնայողական տեխնոլոգիաների ներդրմանը,

- ծավալել շրջակա միջավայրի պահպանությանն ու բնական էկոհամակարգերի վերականգնմանն ուղղված գործունեություն,
- խթանել ֆերմերային տնտեսությունների զարգացման ու գյուղական համայնքներում նորարարական, առաջավոր տեխնոլոգիաների ներդրման գործընթացին,
- նպաստել գյուղական համայնքներում կանաչ տեխնոլոգիաների և կայուն գյուղատնտեսության սկզբունքների ներդրմանն ու կիրառմանը,
- աջակցել գյուղական համայնքներում բնական էկոհամակարգերի և շրջակա միջավայրի պահպանությանը, էկոլոգիապես մաքուր և անվտանգ գյուղատնտեսական մթերքների արտադրությանը,
- օժանդակել գյուղական համայնքներում փոքր ու միջին բիզնեսի զարգացմանը՝ գյուղատնտեսական մթերքների և հումքի արտադրության ու վերամշակման ուղղություններով,
- տրամադրել կազմակերպական և մասնագիտական խորհրդատվություն կանաչ տեխնոլոգիաների ոլորտում,
- իրականացնել գյուղական համայնքների բնակչության ֆինանսա-տնտեսական և սոցիալական վիճակի բարելավմանն ուղղված միջոցառումներ և ծրագրեր,
- կանոնադրական նպատակներից բխող ուսումնա-մեթոդական գործունեություն՝ կադրերի վերապատրաստում, որակավորման բարձրացմանն ուղղված ուսուցում, ուսումնական ծրագրերի մշակում, դասընթացների և գիտաժողովների կազմակերպում.
- կանոնադրական նպատակներից բխող միջազգային համագործակցության իրականացում՝ Հայաստանում լավագույն պրակտիկայի ներդրման նպատակով:

## **2.2. Իր առջև դրված նպատակների արդյունավետ կատարումն ապահովելու համար Հիմնադրամը՝**

- 1) բարեգործական հիմունքներով ներգրավում է միջոցներ՝ իր կանոնադրական նպատակների իրականացման համար,
- 2) համագործակցում է Հայաստանի Հանրապետության և արտերկրների հասարակական կազմակերպությունների և հիմնադրամների հետ,
- 3) մշակում է Հիմնադրամի գործունեության ռազմավարություն, զարգացման և կատարելագործման ծրագրեր, ձեռնարկում է միջոցառումներ դրանց իրագործման ուղղությամբ,
- 4) ապահովում է անհրաժեշտ նյութատեխնիկական բազայով,
- 5) կանոնադրական նպատակների իրականացման համար մշակում և իրականացնում է դրանցից բխող այլ ծրագրեր և միջոցառումներ:

### **2.3. Ձեռնարկատիրական գործունեության տեսակները, որոնցով Հիմնադրամը կարող է զբաղվել անձամբ**

Հիմնադրամը կարող է զբաղվել ձեռնարկատիրական հետևյալ տեսակներով.

ա) դասընթացների, կլոր սեղան-քննարկումների, մամլո ասուլիսների, ուսուցողական ճամբարների, կազմակերպում և անցկացում,

բ) հրատարակչական և տպագրական գործունեություն,

գ) ցուցահանդեսների, տոնավաճառների կազմակերպում,

դ) ծառայությունների մատուցում, մասնավորապես՝ ջեռուցման, օդափոխության, ջրամատակարարման, կոյուղու, էլեկտրամատակարարման, գազամատակարարման, ավտոմատիկայի, անվտանգության համակարգերի վերանորոգում, նոր համակարգերի նախագծում, տեղադրում և մոնտաժ,

ե) կանաչ տեխնոլոգիաների օբյեկտների նախագծում, մոնտաժ և տեղադրում,

զ) կանաչ տեխնոլոգիաների կառուցվածքների, տեխնիկասարքավորումների, ինչպես նաև դրանց պահեստամասերի առքուվաճառք, պատրաստում, վերանորոգում,

է) սննդի արտադրության և վերամշակման ոլորտներում կանաչ տեխնոլոգիաների կիրառման ուսումնացուցադրական աշխատանքների իրականացում և գործնական ուսուցում,

ե) Հիմնադրամին պատկանող շարժական և անշարժ գույքը վարձակալությամբ տրամադրում,

ը) կանաչ տեխնոլոգիաների ոլորտի ուսումնական ծրագրերի մշակում և իրականացում, խորհրդատվական ծառայությունների մատուցում, մասնագետների վերապատրաստում, գիտահետազոտական աշխատանքների իրականացում,

թ) կանաչ տեխնոլոգիաների շուկայի մրցակցության և հասարակական կարծիքի բացահայտմանն ուղղված հետազոտությունների և փորձարարական նախագծերի իրականացում.

ժ) կանաչ տեխնոլոգիական օբյեկտների կառավարման և առևտրային գործունեության հարցերով խորհրդատվությունների մատուցում.

ի) կանաչ ճարտարապետության և քաղաքացիական շինարարության բնագավառների գործունեություն և դրանց հետ կապված տեխնիկական խորհրդատվությունների մատուցում (շինարարության իրականացում, շինարարության որակի տեխնիկական

հսկողություն, շենքերի տեխնիկական վիճակի ուսումնասիրություն, անշարժ գույքի կառավարում և այլն)։

Հիմնադրամը կարող է իրականացնել օրենքով չարգելված և իր կանոնադրությամբ սահմանված ցանկացած տնտեսական գործունեություն: Հիմնադրամը կարող է զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ միայն այն դեպքում, երբ դա ծառայում է այն նպատակների իրականացմանը, որոնց համար նա ստեղծվել է և համապատասխանում է այդ նպատակներին:

Օրենքով սահմանված գործունեության առանձին տեսակներով Հիմնադրամը կարող է զբաղվել միայն լիցենզիայի առկայության դեպքում՝ լիցենզիա ստանալու պահից կամ նրանում նշված ժամկետում: Եթե լիցենզիայի հատկացման պայմաններում նախատեսված է, որ Հիմնադրամը բացի լիցենզավորվող գործունեությունից այլ գործունեությամբ զբաղվել չի կարող, կամ սահմանափակումներ են դրվում գործունեության առանձին տեսակներով զբաղվելու վրա, ապա Հիմնադրամը լիցենզիայի գործողության ժամկետում իրավունք չունի զբաղվել այլ գործունեությամբ, բացառությամբ լիցենզիայով նախատեսվածների կամ այն գործունեության տեսակներով, որոնց մասին նշված է լիցենզիայի մեջ:

2.4 Հիմնադրամի գործունեությունը հիմնվում է ժողովրդավարության, մարդասիրության, հանրամատչելիության, ազգային և համամարդկային արժեքների գուգորդման, անձի ազատ զարգացման, ինքնավարության սկզբունքների վրա:

### **3. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԵՎ ԱՅԼ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

3.1. Հիմնադրամն իր կանոնադրական նպատակներին համապատասխան իրավունք ունի՝

- 1) անարգել տարածել տեղեկություններ իր գործունեության մասին,
- 2) պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից օրենքով սահմանված կարգով ստանալ տեղեկություններ, որոնք անհրաժեշտ են իր կանոնադրական նպատակներն իրականացնելու համար,
- 3) կանոնադրության մեջ կատարել փոփոխություններ (եթե կանոնադրության փոփոխությունները պետք է վերաբերեն Հիմնադրամի նպատակներին կամ շահառուներին, ապա փոփոխություններ կատարելու իրավունքն իրականացնում է դատարանը՝ հիմնադրի կամ հիմնադիրներից մեկի դիմումի հիման վրա),
- 4) ստեղծել առանձնացված ստորաբաժանումներ (մասնաճյուղեր, ներկայացուցչություններ) և հիմնարկներ,
- 5) ստեղծել տնտեսական ընկերություններ կամ լինել նրանց մասնակից,
- 6) զբաղվել բարեգործությամբ,



- 7) կնքել գործարքներ և պայմանագրեր Հայաստանի և արտերկրների կազմակերպությունների և անհատների հետ,
- 8) դիմել բարերարներին՝ կամավոր դրամական և այլ նվիրատվությունների խնդրանքով, ստանալ և տնօրինել դրանք,
- 9) գնել, կառուցել, ձեռք բերել, ստանալ, վարձակալել, վարձով տրամադրել, վաճառել շարժական և անշարժ գույք,
- 10) իրականացնել օրենքով չարգելված այլ գործունեություն:

3.2. Հիմնադրամը, Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և իր կանոնադրությանը համապատասխան, կարող է անդամակցել միջազգային և օտարերկրյա ոչ պետական կազմակերպություններին:

3.3. Հիմնադրամը պարտավոր է՝

- 1) գործել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը, օրենքին և այլ օրենքներին ու իրավական ակտերին, ինչպես նաև սույն կանոնադրությանը համապատասխան.
- 2) օրենքով սահմանված կարգով վարել գործավարություն, ինչպես նաև հաշվապահական հաշվառում և վիճակագրություն.
- 3) օրենքով նախատեսված դեպքերում և կարգով տեղեկատվություն ու հաշվետվություններ ներկայացնել պետական մարմիններին.
- 4) իրականացնել օրենսդրությամբ սահմանված այլ պարտականություններ:

3.4. Սույն կանոնադրության 5.4.-րդ կետի 1 և 2 ենթակետերով նախատեսված անձանց, ինչպես նաև օրենքով լիազորված իրավասու պետական մարմինների պահանջով Հիմնադրամը պարտավոր է հնգօրյա ժամկետում նրանց ընձեռել կանոնադրության, կանոնադրության լրացումների և փոփոխությունների հետ ծանոթանալու հնարավորություն: Հիմնադրամը պարտավոր է այդ անձանց պահանջով տրամադրել նրանց կանոնադրության պատճենը: Վճարը, որը գանձվում է կանոնադրության պատճենը տրամադրելու համար, չի կարող դրա պատրաստման ծախսերից ավելին լինել: Օրենքով լիազորված իրավասու պետական մարմիններին նշված փաստաթղթերը տրամադրվում են անվճար:

3.5. Անօրինական գործունեություն ծավալելու համար Հիմնադրամը և նրա պաշտոնատար անձինք կրում են օրենքով սահմանված պատասխանատվություն:

3.6. Հիմնադրամին օգնություն ցուցաբերող անձինք (այդ թվում՝ Հիմնադրամի հիմնադիրը) իրավունք ունեն.

1) մասնակցել Հիմնադրամի գործունեությանը,

2) Հիմնադրամի կառավարման մարմինների կողմից, ինչպես նաև կնքված պայմանագրերով սահմանված պայմաններով Հիմնադրամի խնդիրներին ու նպատակներին համապատասխան ստանալ խորհրդատվական, փորձագիտական, միջնորդական, գիտատեխնիկական և այլ օգնություն,

3) Հիմնադրամի միջոցով ստեղծել և զարգացնել երկկողմ և բազմակողմ կապեր,

4) Հիմնադրամի կողմից նրա իրավունքների, իրավական ու տնտեսական հնարավորությունների շրջանակներում օգտվել սեփական շահերի պաշտպանությունից,

5) ցանկացած ժամանակ դադարեցնել իրենց մասնակցությունը Հիմնադրամի աշխատանքներին:

3.7. Հիմնադրամը վարում է իր գործունեությանն աջակցող անձանց ռեեստր:

3.8. Հիմնադրամին աջակցող անձինք պարտավոր են.

1) Հիմնադրամի ծրագրերի և միջոցառումների իրականացման ժամանակ գործել Հիմնադրամի կանոնադրության պահանջներին համապատասխան,

2) չտարածել Հիմնադրամի գործունեության մասին գաղտնի տեղեկություններ,

3) զերծ մնալ այնպիսի գործողություններից, որոնք կարող են վնաս պատճառել Հիմնադրամին:

#### **4. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ**

4.1. Հիմնադրամի կառավարման մարմիններն են՝

- Հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը (այսուհետ՝ նաև Հոգաբարձուների խորհուրդ կամ Խորհուրդ),

- Հիմնադրամի տնօրենը (այսուհետ՝ Տնօրեն):

4.2. Հիմնադրամի կառավարման բարձրագույն և հսկողություն իրականացնող մարմինը Խորհուրդն է:

Խորհուրդը բաղկացած է 5 (հինգ) անդամներից: Հիմնադրամի Խորհրդի անդամ կարող են լինել 18 տարին լրացած գործունակ ֆիզիկական անձինք, ինչպես նաև հիմնադիրները: Խորհրդի անդամները չեն կարող լինել Հիմնադրամի այլ մարմնի անդամ:

Խորհրդի անդամների լիազորությունների ժամկետը չի սահմանափակվում:

Խորհուրդը ձևավորվում կամ համալրվում է սույն կանոնադրության 4.3 կետով սահմանված կարգով:

Խորհրդի անդամներն իրենց պարտականությունները կատարում են առանց վարձատրության՝ հասարակական հիմունքներով և չեն կարող լինել Հիմնադրամի կառավարման այլ մարմնի անդամ:

#### 4.3. Հիմնադրամի Խորհրդի կազմավորման կարգը.

Հիմնադրամի Խորհրդի առաջին կազմի, որը ձևավորվում է հիմնադիրների միաձայն որոշմամբ, անդամների լիազորություններն սկսվում են Հիմնադրամի պետական գրանցումից հետո եռամսյա ժամկետը լրանալու հաջորդող օրվանից, իսկ եթե նշանակվել են Հիմնադրամի Խորհրդի բոլոր անդամները, ապա դրա հաջորդող օրվանից:

#### 4.4. Խորհրդի անդամի իրավունքներն ու պարտականությունները.

Խորհրդի անդամն իրավունք ունի՝

- 1) առաջարկություններ ներկայացնել հիմնադրամի խորհրդի նիստերի օրակարգի և քննարկվող հարցերի վերաբերյալ,
- 2) նախապատրաստել և հիմնադրամի խորհրդի քննարկմանը ներկայացնել հարցեր, առաջարկություններ և որոշումների նախագծեր,
- 3) ստանալ տեղեկություններ Հիմնադրամի գործունեությանը վերաբերող ցանկացած հարցի վերաբերյալ,
- 4) ստանալ իր պարտականությունների կատարմամբ պայմանավորված ծախսերի փոխհատուցում:

Խորհրդի անդամը պարտավոր է՝

- 1) մասնակցել Խորհրդի նիստերին,
- 2) իրենց պարտականությունների կատարման ընթացքում գործել՝ ելնելով Հիմնադրամի շահերից,
- 3) հոգալ հիմնադրամի հեղինակության բարձրացման մասին,
- 4) աջակցել հիմնադրամի ներդրումների համալրմանը,

5) չխախտել խորհրդի կանոնակարգի պահանջները:

4.5. Խորհրդի անդամի լիազորությունը դադարում է.

1) Խորհրդի նախագահին տրված գրավոր դիմումի հիման վրա,

2) նրա կողմից իր պարտականությունները պատշաճ չկատարելու դեպքում՝ Խորհրդի մնացած անդամների ձայների առնվազն 3/4-ով,

3) եթե դադարել են Խորհրդի անդամների ընդհանուր թվի կեսի կամ կեսից ավելի լիազորությունները,

4) դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ ճանաչվելու դեպքում,

5) նրա մահվան դեպքում:

Խորհրդի անդամի լիազորությունը դադարելու դեպքում նրա փոխարեն նոր անդամ նշանակվում է նախկին անդամի նշանակման կարգով, ոչ ուշ քան Խորհրդի անդամի թափուր տեղ առաջանալու մասին Տնօրենի ծանուցումը ստանալու օրվանից հետո՝ 30 օրվա ընթացքում՝ օրենքով:

Խորհրդի անդամի թափուր տեղ առաջանալու մասին տեղեկացված լինելու օրվանից ոչ ուշ, քան 10 օրվա ընթացքում Հիմնադրամի Տնօրենը տեղեկացնում է Խորհրդի տվյալ անդամին նշանակած մարմնին, Հիմնադրամի հիմնադիրներին և մարմիններին:

4.6. Եթե Խորհրդի բոլոր անդամների լիազորությունների դադարման դեպքում երկամսյա ժամկետում Խորհրդի անդամների կեսից ավելին չի նշանակվում, ապա Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարը երկամսյա ժամկետում նշանակում է 3 անդամից կազմված ժամանակավոր խորհուրդ:

Ժամանակավոր խորհուրդը պարտավոր է քայլեր ձեռնարկել օրենքով սահմանված կարգով Խորհրդի կազմի համալրման համար:

Ժամանակավոր խորհուրդն իրավասու է՝

1) իրականացնել Հիմնադրամի գործունեությունը շարունակելուն ուղղված՝ օրենքով Խորհրդին վերապահված լիազորություններ,

2) դիմել դատարան՝ Հիմնադրամը լուծարելու համար:

Եթե ժամանակավոր խորհուրդ նշանակելուց հետո՝ վեցամսյա ժամկետում, Խորհրդի անդամների կեսից ավելին չի նշանակվում, ապա ժամանակավոր խորհուրդը պարտավոր է դիմել դատարան՝ Հիմնադրամը լուծարելու համար:

#### 4.7. Խորհրդի իրավասությանն են պատկանում՝

- 1) Հիմնադրամի ռազմավարական ծրագրի (ծրագրերի) հաստատումը,
- 2) Հիմնադրամի կողմից իրականացվող (այդ թվում՝ անձամբ) ձեռնարկատիրական գործունեության տեսակների սահմանումը,
- 3) Հիմնադրամի բյուջեի և նրա փոփոխությունների, տարեկան ֆինանսական հաշվետվությունների և Հիմնադրամի գործունեության տարեկան հաշվետվությունների հաստատումը,
- 4) Հիմնադրամի գույքի տնօրինման կարգի հաստատումը,
- 5) Հիմնադրամի վերակազմակերպման մասին որոշման ընդունումը,
- 6) Հիմնադրամի լուծարման հարցով դատարան դիմելու մասին որոշման ընդունումը,
- 7) Հիմնադրամի լուծարման հանձնաժողովի (լուծարողի) նշանակումը, լուծարման կարգի ու ժամկետների սահմանումը, լուծարման միջանկյալ հաշվեկշռի հաստատումը, լուծարման հաշվեկշռի հաստատումը,
- 8) Խորհրդի անդամների լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին որոշումների ընդունումը,
- 9) Խորհրդի նախագահի, Տնօրենի ընտրության և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարման մասին որոշումների ընդունումը,
- 10) Տնտեսական ընկերությունների ստեղծման կամ դրանցում մասնակցության, ինչպես նաև առանձնացված ստորաբաժանումների և հիմնարկների ստեղծման և դրանց կանոնադրությունների հաստատման մասին որոշումների ընդունումը,
- 11) Հիմնադրամի ֆինանսատնտեսական գործունեության վերահսկումը,
- 12) մեկամյա պարբերականությամբ Տնօրենի հաշվետվությունների լսումը,
- 13) իր որոշումների կատարման ընթացքի վերահսկումը,
- 14) Հիմնադրամի աուդիտ իրականացնող անձի (աուդիտորի) ընտրությունը,
- 15) Հիմնադրամի կառուցվածքի հաստատումը,
- 16) Հիմնադրամի հաստիքացուցակի հաստատումը,

17) օրենքով, սույն կանոնադրությամբ նախատեսված, ինչպես նաև Հիմնադրամի այլ մարմիններին չվերապահված այլ լիազորությունների իրականացումը:

#### 4.8. Հիմնադրամի Խորհրդի նիստերը և որոշումները՝

1) Հիմնադրամի խորհուրդն իր գործունեությունն իրականացնում է նիստերի միջոցով: Հիմնադրամի Խորհրդի նիստերը գումարվում են ոչ պակաս, քան տարին մեկ անգամ՝ Խորհրդի նախագահի կողմից:

Խորհրդի նիստերը կարող են հրավիրվել նաև Խորհրդի անդամների 1/3-ի պահանջով՝ Հիմնադրամի Խորհրդի նախագահի կողմից՝ համապատասխան պահանջը ներկայացնելուց 30 օրվա ընթացքում: Խորհրդի նիստերը կարող են անցկացվել էլեկտրոնային փոստի կամ կապի այլ միջոցների կիրառմամբ, ինչպես նաև հարցման կարգով:

Եթե նշված ժամկետում Խորհրդի նախագահը նիստ չի հրավիրում, ապա նիստը կարող են հրավիրել նման պահանջներ կայացրած անձինք:

2) Խորհրդի նիստն իրավագոր է, եթե դրան մասնակցում են Խորհրդի անդամների կեսից ավելին: Խորհրդի որոշումներն ընդունվում են նիստին մասնակցող անդամների ձայների մեծամասնությամբ: Խորհրդի նիստերում Խորհրդի յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայնի իրավունք:

Հիմնադրամի Խորհրդի նախագահի, Հիմնադրամի Տնօրենի ընտրության և պաշտոնից ազատման մասին որոշումներն ընդունվում են Խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:

Հիմնադրամի վերակազմակերպման դեպքում, Խորհուրդը Հիմնադրամի վերակազմակերպման մասին որոշումն ընդունում է միաձայն:

Եթե Հիմնադրամի Խորհրդի նիստում քննարկվում է Խորհրդի որևէ անդամի կամ նրա հետ փոխկապակցված անձի (ծնող, ամուսին, զավակ, եղբայր, քույր, ամուսնու ծնող, զավակ, եղբայր և քույր) գույքային կամ այլ շահերի վերաբերյալ հարց, ապա Հիմնադրամի Խորհրդի տվյալ անդամը քվեարկությանը չի մասնակցում:

#### 4.9. Հիմնադրամի Խորհրդի նախագահը

1) Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահին ընտրում են հոգաբարձուների խորհրդի անդամները՝ հոգաբարձուների խորհրդի կազմից: Խորհուրդը կարող է ցանկացած ժամանակ վերընտրել նախագահին կամ ընտրել նոր նախագահ՝ իր անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:

## 2) Խորհրդի նախագահը՝

ա) կազմակերպում է Հիմնադրամի խորհրդի աշխատանքները, անհրաժեշտության դեպքում կարող է կազմավորել Խորհրդի ժամանակավոր հանձնախմբեր, սույն կանոնադրության 4.7. կետի 11 ենթակետով նախատեսված Հիմնադրամի ֆինանսատնտեսական գործունեության վերահսկման (ստուգում, ուսումնասիրում և այլն) իրականացման և սույն կանոնադրության 4.7. կետի 3, 4, 10, ենթակետերով նախատեսված հարցերի նախնական քննարկման և դրանց վերաբերյալ Խորհրդին եզրակացություններ (տեղեկանքներ) ներկայացնելու համար,

բ) գումարում է Հիմնադրամի խորհրդի նիստերը և նախագահում է դրանք,

գ) կազմակերպում է նիստերի արձանագրության վարումը,

դ) Խորհրդի քննարկմանն է ներկայացնում Խորհրդի անդամների լիազորությունների դադարեցման մասին որոշման նախագիծ, սույն կանոնադրության 4.5 կետի 2 ենթակետով նախատեսված դեպքերում:

3) Հիմնադրամի Խորհրդի նախագահի բացակայության դեպքում նրա պարտականությունները, Հիմնադրամի Խորհրդի որոշմամբ, կատարում է անդամներից մեկը:

### 4.10. Հիմնադրամի Տնօրենը.

1) Հիմնադրամի ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է Տնօրենը:

2) Տնօրենի իրավասությանն են պատկանում Հիմնադրամի ընթացիկ գործունեության կառավարման բոլոր հարցերը:

3) Տնօրենը կազմակերպում է Հիմնադրամի խորհրդի որոշումների կատարումը:

4) Տնօրենին ընտրում և պաշտոնից ազատում է Խորհուրդը: Նրա պաշտոնում առաջին անգամ նշանակում կարող է կատարել նաև հիմնադիրը:

Տնօրենի իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են օրենքով, սույն կանոնադրությամբ և նրա հետ կնքված պայմանագրով: Հիմնադրամի անունից պայմանագիր ստորագրում է Խորհրդի նախագահը կամ Խորհրդի կողմից լիազորված այլ անձ:

5) Տնօրենն այլ կազմակերպություններում կարող է վճարովի պաշտոններ զբաղեցնել միայն Խորհրդի համաձայնությամբ:

6) Հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդն իրավունք ունի ցանկացած ժամանակ լուծել Տնօրենի հետ կնքված պայմանագիրը՝ օրենքով, սույն կանոնադրությամբ և տվյալ պայմանագրով սահմանված կարգով:

#### 4.11. Տնօրենը՝

1) տնօրինում է Հիմնադրամի գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները, գործարքներ է կնքում Հիմնադրամի անունից,

2) ներկայացնում է Հիմնադրամը Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա պետություններում,

3) գործում է առանց լիազորագրի,

4) տալիս է լիազորագրեր,

5) սահմանված կարգով կնքում է պայմանագրեր, այդ թվում՝ աշխատանքային,

6) բանկերում բացում է Հիմնադրամի հաշվարկային (այդ թվում՝ արտարժույթային) և այլ հաշիվներ,

7) Խորհրդի հաստատմանն է ներկայացնում Հիմնադրամի աշխատանքային ներքին կանոնակարգը, առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների ու Հիմնադրամի կողմից հիմնադրվող տնտեսական ընկերությունների կանոնադրությունները, Հիմնադրամի վարչակազմակերպական կառուցվածքը, հաստիքացուցակը,

8) իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս է կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը,

9) սահմանված կարգով աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում Հիմնադրամի աշխատողներին, այդ թվում՝ առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների ղեկավարներին ու աշխատողներին,

10) աշխատակիցների նկատմամբ կիրառում է խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցներ:

## 5. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳՈՒՅՔԸ

5.1. Հիմնադրամը՝ որպես սեփականություն, ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով:

5.2. Հիմնադրամի սկզբնական միջոցներն են հիմնադրի կողմից ստեղծման պահին փոխանցված նյութական և (կամ) ֆինանսական միջոցները:



Հիմնադրի կողմից Հիմնադրամին հանձնած գույքը Հիմնադրամի սեփականությունն է: Հիմնադրամն այդ գույքն օգտագործում է իր կանոնադրությամբ սահմանված նպատակով:

5.3. Հիմնադրամի հիմնադրի և այլ ֆիզիկական և իրավաբանական անձանց ներդրումները (նվիրաբերությունները, նվիրատվությունները և այլն) կարող են կատարվել ինչպես դրամական և գույքային տեսքով (այդ թվում՝ սարքավորումներ, շենքեր, շինություններ, մտավոր սեփականության նկատմամբ իրավունքներ), այնպես էլ գույքի նկատմամբ օգտագործման իրավունքի տեսքով: Այս դեպքում կատարվում է ներդրվող գույքի կամ օգտագործման իրավունքի դրամական գնահատում, որի մեծությունը նշվում է համապատասխան անձի (ներդրողի) ու Հիմնադրամի միջև կնքվող պայմանագրում:

5.4. Հիմնադրամի գույքի և միջոցների ձևավորման աղբյուր կարող են լինել՝

1) հիմնադրի ներդրումները.

2) ֆիզիկական և իրավաբանական անձանց նվիրատվությունները և նվիրաբերությունները, այդ թվում՝ օտարերկրյա քաղաքացիների, իրավաբանական անձանց, միջազգային կազմակերպություններին նվիրատվությունները և նվիրաբերությունները.

3) դրամական մուտքերը պետական բյուջեից.

4) դրամաշնորհները.

5) հիմնադրամի և իր ստեղծած կամ իր մասնակցությամբ տնտեսական ընկերությունների ձեռնարկատիրական գործունեությունից ստացված միջոցները.

6) հանգանակությունները՝ միջոցներ, որոնք ստացվում են դրանց կուտակմանն ուղղված գործունեությունից (մշակութային, սպորտային, զվարճալի և այլ միջոցառումների միջոցով գումարների հայթայթում),

7) օրենքով չարգելված այլ միջոցները:

5.5. Հիմնադրամի սեփականությունն է համարվում իր կողմից ստեղծված, ձեռքբերված կամ այլ քաղաքացիների, կազմակերպությունների կողմից հանձնված ունեցվածքը, ներառյալ՝ դրամական միջոցները, բաժնետոմսերը, այլ արժեթղթերը և մտավոր սեփականության նկատմամբ իրավունքները:

5.6. Հիմնադրամի սեփականությունը չի կարող օգտագործվել ի շահ իր հիմնադրի, հիմնադրամի մարմինների անդամների, ինչպես նաև Հիմնադրամի աշխատողների, բացառությամբ աշխատողների աշխատավարձի և Հիմնադրամի մարմինների անդամների պարտականությունների կատարմամբ պայմանավորված՝

փոխհատուցման ենթակա ծախսերի, ինչպես նաև այն դեպքերի, երբ Հիմնադրամի հիմնադիրը, Հիմնադրամի մարմինների անդամները, ինչպես նաև Հիմնադրամի աշխատողները հանդիսանում են կանոնադրությամբ նախատեսված շահառուներ:

## **6. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼԸ**

6.1 Հիմնադրամի Կանոնադրության մեջ փոփոխություններ և լրացումներ մտցնել կարող է միայն Հիմնադիրը՝ միաձայն որոշմամբ: Կանոնադրության այդ փոփոխությունները և լրացումները չեն կարող վերաբերել Հիմնադրամի նպատակներին կամ շահառուներին:

6.2 Եթե կանոնադրության պահպանումն ամփոփոխ ձևով կարող է առաջացնել այնպիսի հետևանքներ, որոնք հնարավոր չէր կանխատեսել Հիմնադրամը ստեղծելիս, կամ փոփոխությունները պետք է վերաբերվեն Հիմնադրամի նպատակներին կամ շահառուներին, ապա փոփոխություններ կատարելու իրավունքն իրականացնում է դատարանը՝ Հիմնադրամի Հիմնադրի կամ հիմնադիրներից մեկի դիմումի հիման վրա:

## **7. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ**

7.1. Հիմնադրամը կարող է վերակազմակերպվել միայն հիմնադրամի՝ այլ հիմնադրամին միացման կամ այլ հիմնադրամի հետ միաձուլման ձևով:

Հիմնադրամների միաձուլում է համարվում նոր հիմնադրամի ստեղծումը՝ նրան երկու կամ ավելի միաձուլվող հիմնադրամների իրավունքների և պարտականությունների փոխանցմամբ և միաձուլվող հիմնադրամների դադարմամբ:

Հիմնադրամների միացում է համարվում մեկ կամ մի քանի հիմնադրամների գործունեության դադարումը՝ դրանց իրավունքների և պարտականությունների փոխանցմամբ այլ հիմնադրամի:

Հիմնադրամի վերակազմակերպումը կատարվում է հիմնադրի միաձայն որոշմամբ: Հիմնադրամի վերակազմակերպումը կարող է կատարվել նաև հոգաբարձուների խորհրդի միաձայն որոշմամբ:

7.2. Լուծարումը Հիմնադրամի գործունեության դադարումն է՝ առանց նրա իրավունքների և պարտականությունների իրավահաջորդության կարգով այլ անձանց անցնելու:

7.3. Հիմնադրամը լուծարելու մասին որոշում կարող է ընդունել միայն դատարանը՝ շահագրգիռ անձանց դիմումով:

Հիմնադրամը կարող է լուծարվել էթե՝

- 1) Հիմնադրամի գույքը բավարար չէ նրա գործունեության իրականացման համար, և անհրաժեշտ գույք ստանալու հնարավորությունն իրական չէ,
- 2) իր գործունեությամբ Հիմնադրամը շեղվել է կանոնադրությամբ նախատեսված նպատակներից,
- 3) հնարավոր չէ հասնել Հիմնադրամի նպատակներին և հնարավոր չէ կատարել այդ նպատակների փոփոխություն,
- 4) Հիմնադրամի գործունեությունը վտանգում է պետական և հասարակական անվտանգությունը, հասարակական կարգը, հանրության առողջությունն ու բարքերը, այլոց իրավունքներն ու ազատությանները,
- 5) Հիմնադրամը թույլ է տվել օրենքի բազմակի կամ կոպիտ խախտումներ կամ պարբերաբար իրականացրել է իր կանոնադրական նպատակներին հակասող գործունեություն,
- 6) Հիմնադրամը ստեղծելիս հիմնադիրը թույլ է տվել օրենքի էական խախտումներ կամ կեղծիքներ,
- 7) Հիմնադրամը կարող է լուծարվել նաև օրենքով նախատեսված այլ դեպքերում:

7.4. Հիմնադրամի լուծարման կարգը:

- 1) Դատարանի կողմից Հիմնադրամի լուծարման մասին որոշում ընդունելուց հետո Խորհուրդը նշանակում է լուծարման հանձնաժողով (լուծարող) և Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի և Հիմնադրամների մասին Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն սահմանում է լուծարման կարգն ու ժամկետները,
- 2) Լուծարման հանձնաժողովի նշանակման պահից նրան են անցնում Հիմնադրամի գործերի կառավարման լիազորությունները: Լուծարվող Հիմնադրամի անունից դատարանում հանդես է գալիս լուծարման հանձնաժողովը:
- 3) Լուծարման գործընթացում գտնվելու մասին տեղեկությունները (լուծարման գործընթացի սկիզբը և ավարտը, լուծարման հանձնաժողովի կազմը) գրառվում են իրավաբանական անձանց պետական գրանցամատյանում՝ լուծարման հանձնաժողովի դիմումի հիման վրա:
- 4) Լուծարման հանձնաժողովը [www.azdarar.am](http://www.azdarar.am) հասցեում գտնվող ՀՀ հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում հայտարարություն է զետեղում Հիմնադրամի լուծարման և պարտատերերի և պահանջների ներկայացման կարգի ու ժամկետների մասին:

Այդ ժամկետը չի կարող պակաս լինել երկու ամսից՝ սկսած լուծարման մասին հրապարակման պահից, որը համարվում է Հիմնադրամի լուծարման գործընթացի սկիզբ:

5) Լուծարման հանձնաժողովն իրականացնում է գույքի վերագնահատումը, միջոցներ է ձեռնարկում պարտատերերի հայտնաբերման և դեբիտորական պարտքերի ստացման ուղղությամբ, ինչպես նաև տեղեկացնում է պարտատերերին Հիմնադրամի լուծարման մասին:

6) Լուծարման ընթացքում Հիմնադրամն իրավունք ունի կնքել նոր գործարքներ և ստանձնել նոր պարտավորություններ՝ միայն իր պարտավորությունները կատարելու համար անհրաժեշտ ընթացիկ գործունեությունն ավարտելու անհրաժեշտության դեպքում:

7) Պարտատերերի կողմից պահանջներ ներկայացնելու ժամկետն ավարտվելուց հետո լուծարման հանձնաժողովը կազմում է միջանկյալ լուծարման հաշվեկշիռ, որը տեղեկություններ է պարունակում լուծարվող Հիմնադրամի գույքի կազմի, պարտատերերի ներկայացրած պահանջների ցանկի, ինչպես նաև պահանջների քննարկման արդյունքների մասին:

8) Միջանկյալ լուծարման հաշվեկշիռը հաստատում է Հիմնադրամի հոգաբարձուների Խորհուրդը:

9) Միջանկյալ լուծման հաշվեկշռի հաստատվելուց հետո, եթե լուծարվող Հիմնադրամի ունեցած դրամական միջոցներն անբավարար են պարտատերերի պահանջները բավարարելու համար, լուծարման հանձնաժողովը, օրենքով սահմանված կարգով, հրապարակային սակարկություններով իրականացնում է Հիմնադրամի գույքի վաճառքը:

10) Լուծարման հանձնաժողովը լուծարվող Հիմնադրամի պարտատերերին վճարումներ է կատարում Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 70-րդ հոդվածով սահմանված հերթականությամբ և միջանկյալ լուծարման հաշվեկշռին համապատասխան՝ սկսած դրա հաստատման պահից:

11) Պարտատերերի պահանջները բավարարելուց հետո, ինչպես նաև այն դեպքում, երբ լուծարման միջանկյալ հաշվեկշիռը հաստատելու պահին Հիմնադրամը չունի պարտավորություններ պարտատերերի նկատմամբ, Հիմնադրամի մնացած գույքն ուղղվում է սույն կանոնադրությամբ նախատեսված նպատակներին, իսկ դրա անհնարինության դեպքում փոխանցվում է պետական բյուջե:

12) Հիմնադրամի գույքի ամբողջական բաշխումն իրականացնելուց հետո լուծարման հանձնաժողովը կազմում է լուծարման հաշվեկշիռ և ներկայացնում է Հիմնադրամի

Խորհրդի հաստատմանը: Լուծարման հանձնաժողովը Հիմնադրամի Խորհրդի հաստատված լուծարման հաշվեկշիռը ներկայացնում է դատարանի հաստատմանը:

13) Լուծարման հանձնաժողովը հաստատված լուծարման հաշվեկշիռն օրենքով սահմանված մյուս փաստաթղթերի հետ ներկայացնում է իրավաբանական անձանց պետական ռեգիստր՝ Հիմնադրամի լուծարման պետական գրանցում կատարելու համար:

14) Հիմնադրամի լուծարումը համարվում է ավարտված, իսկ նրա գոյությունը դադարած՝ պետական գրանցման պահից:

15) Հիմնադրամի Խորհրդի կողմից սույն կետի առաջին, ութերորդ և տասներկուերորդ ենթակետերով սահմանված իր լիազորությունները երկամսյա ժամկետում (համապատասխանաբար դատարանի կողմից որոշման ընդունման, լուծարման հանձնաժողովի կողմից լուծարման միջանկյալ հաշվեկշռի և լուծարման հաշվեկշռին երկարացման պահից) չկատարելու դեպքում Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարը Հիմնադրամի լուծարման հետ կապված լիազորությունների իրականացման նպատակով երկամսյա ժամկետում նշանակում է ժամանակավոր խորհուրդ:

«Կանաչ տեխնոլոգիաների հայկական կենտրոն»  
հիմնադրամի խորհրդանիշի պատկերը.



«Կանաչ տեխնոլոգիաների հայկական կենտրոն»  
հիմնադրամի խորհրդանիշի նկարագրությունը.

«Մուգ կանաչ տերևի պատկեր բաց կանաչ տան ֆոնի վրա, որի վրա տեղադրված է արևային մարտկոց»:

